






# ՇՈՒՇԻ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ



**Պատմություն.** Շուշվա քարի (քար՝ բերդ) մասին գրավոր աղբյուրներում պահպանված առաջին վկայություններից մեկը 1717 թ.-ից է. «Ավան ուզբաշին որ եկավ Շոշվայ քարըն մտավ սահիք, խորուշ իլավ. ՌՃԿԶ: Օսմանյուն, որ քարըն կալավ Ավան ուզբաշին փախավ քինաց...»:

Բերդի մասին հիշատակություններն ավելի հաճախակի են դառնում XVIII դարի 2-րդ կեսից: Ահա դրանցից մի քանիսը. 1750 թ. հիշվում է «Բեկնազար քեմխուդայ Շուշեցի»-ն: «Շոշվայ դալան, որ բինա դրին շինեցին ՌՄԴ. (1755)»: «Մամատ Հասան խանըն եկավ Ղալին երայ ՌՄԶ (1757)»: «Ֆաթալի խանըն ուրումլու որ եկավ Ղալես երան ՌՄԹ (1760)»:

1761 և 1762 թթ. Շուշիի վրա հարձակվում է Ատրպատականի Ֆաթալի խանը. «...ի ՌՄԺ ամի թուականութեանս մերում, ժողովեալ զբազում զօրս ի վերայ իւր, չօգա ի վերայ մեծ և անուանի դղեկին Շօշ կոչեցեալ ամրագունեղ բերթին ամել գնա ի ձեռն, և գիշսօղն նորին զՓանահ խանն, որ ի Ջիւանշիր յազգէ: Եւ մինչև ի վերաժամանիլ Չմեռնային եղանակին մարտուցեալ ընդ նմա և ոչ կարացեալ առնել ինչ, դարձաւ յայն ամի ունայնութեամբ ի տեղի իւր. իսկ ի գալ միտայ ամին, ՌՄԺԱ թուականին, ժողովեալ ի վերայ նոյնոյ բերթի մեծաւ ուժով...»:

Իր հետ օգնական ուժեր ունենալով Ղարաղաղի կույր Բյազին խանի, Գանձակի Շահվերդի խանի և նույնիսկ Հերակլ արքայի գորագնդերը՝ Ֆաթալի խանը դարձյալ չի կարողանում գրավել Շուշին, բայց ավերում և թալանում է երկրամասի գյուղերը. «Մակայն՝ Ֆաթալի խանն և ոչ յայն ամի յառաջացուցանել կարաց զկամս իւր: Քանզի վայրն գորով կարի անհայելի, և բանակ նորին ի բացեալ յոյժ, ըստ տեղուն, վասն որոյ՝ ոչ կարաց նա վտանկել ինչ գրեթականսն, ոչ ի ձեռն թփխանայի, և ոչ այլով իւր պատերազմական հնարի: Բայց՝ զբազում աւերս արար երկրին և գյուղով գերիս վարեաց»:

1795 թ. քաղաքը պաշարում են պարսից զորքերը. «Այա Մամատ խանըն եկավ Շուշվայ դալին վերայ եկ կնաց Թիֆլիզ առավ ՌՄՏԳ. (1795)»:

«Այա Մամադ խանըն դալումս սպանեցին ՌՄՏԶ (1797)»: Պարսից շահի՝ Շուշիում սպանվելու մասին ավելի մանրամասներ է հաղորդում Ավետիս քահանան. «1797 (ՌՄՏԶ) հունիսի 11. անիծյալ արչունարբու Խատըն շահի մասին համբավաբեր լուր բերավ Ղարս Լոնան փաշային, թե Շուշի զնալու ճանապարհին շահի դուլը և Սաղըղ խանը միասին գաղտնի խորհուրդ են անում սպանել շահին: Դուլը շան պես

սատկացել է շահին սորա քնած ժամանակ: Հետո ստույգն իմացանք, որ շահը Շուշին տիրապետելով՝ ապահով նստել է այնտեղ, որպեսզի յուր մտադրության համաձայն գնա Օսմանցոց վերա և նամակ է գրել Երևան յուր եղբայր սարդարին՝ ծանուցանելով նորան, որ պատրաստ լինի յուր հետ միասին Ղարսի վերա գնալու: Այդ հրամանը գրելու ժամանակ մտն է լինում յուր դուլը, որ հայտնում է գրի բովանդակությունը Սաղըղ խանին, որ Ղազախու խանն էր: Օրինյալ դուլն հարցնում է Սատըղ խանին թե՛ եթե ինքը շահին սպանե, Սաղըղ խանն յուրյան հովանավոր կլինի արդյո՞ք: Նա պատասխանում է, թե «գլուխս քո ուղուրիս է»: Այա միմյանց երդվում են: Դուլը վերադառնում է շահի մոտ և գիշերն Աստուծո առնուրը հիշելով մի սուր է կոխել նորա փորը, կռզել է վրան և գլուխը շան նման կտրել է: Իսկույն թևի բազալանները, վրայի ջափակիր քարերն առնում՝ տանում է Սաղըղ խանին աչքալույս: Եվ այսպես վերացավ չարն աշխարհիս միջից»:

«Խերցախըն ընկաւ Շուշի դալան ՌՄԽԸ (1799)»: «Իբրահիմ խանըն դալիս ներքեմ դալի մայօրըն ըսպանել տվեց ՌՄԾԵ (1806)»:

1824 թ. «Աբաս-Միրզա... կը պաշարէ Շուշի բերդն, ուր պատասխանած էին ռուս...: Բերդն ընդդիմացաւ քառասուն և ութ ատուր սարսափելի պաշարման մը: Աբաս-Միրզա ուներ իւր բանակին մէջ ֆրանսիացի և անգլիացի ռազմագէտներ, բայց հակառակ բոլոր իրենց ջանքերուն, բերդն անձնատուր չէր լինէր... Հայերն էին, որ իրենց քաջութեամբը կը պաշտպանէին զայն: Ահա ինչ որ կը պատմուի այդ մասին ռուսաց կողմանէ Մադաթովի կենսագրութեան մէջ.

Ռուսք անխոյժ էին վասն զի իրենց հետ էին Հայերն որք ամենայն քաջութեամբ կը պատասխանէին ընդդէմ բերդին եղած ամէն յարձակմանց: Բերդին մէջ ոչ բաւական պաշար կար եւ ոչ հրանօթ: Աբաս-Միրզա տեսնելով պահապան գորքերուն այդ յամառ և աննուաճելի ընդդիմութիւնն, ըմբռնեց թէ կարող չը պիտի լինի տիրել բերդին յարձակումներով: Յուսահատած իշխանը խորամանկութեանց դիմեց. զանազան խոստումներով ուզեց հրապուրել Հայերն որպէս զի սորա բաժնուովն ռուսներէն և բերդն յանձնեն, բայց Հայերն միահոգի և միասիրտ ռուսներու հետ, մերժմամբ պատասխանեցին այդ հրաւերին:

Հայոց այս ընթացքն մեծ բարիք մը եղաւ ռուսաց համար: Մահմանագլխի այդ նշանատուր բերդի գրաւումը անպատճառ շատ գէշ հետեւանքներ կ'ունենար մեզ ռուսացս համար: Եթէ Պարսիկ տիրէին այդ բերդին, այնուհետեւ այլ եւս առանց ար-

գելքի կը դիմէին ի Թիֆլիզ նախ քան անդ հասնիլն Ռուսաց զինուորներու: Սքանչելի էին Շուշիի մէջ կատարուած գործողութիւնները: Գիշերը կը պատրաստէին վառօդ ու գնտակ եւ ցերեկը կը գործածէին զայն: Հայոց կանայք եւ աղջկունք ցոյց կուտային եռանդ ու քաջութիւնը եւ կ'օգնէին պատերազմող զինուորաց, կը մասնակցէին կռույն: Եւ մինչեւ ցայսօր կենդանի կը մնան Շուշուայ մէջ այդ ինքնագոհողութեան յիշատակներ»:

1905 թ. հայ-թաթարական ընդհարումների այիքն ընդգրկում է նաև Շուշին, սակայն նախահարձակ թաթարական ունակներին հայկական կողմի հակադարձումը լինում է կազմակերպված և հուժկու:

Ի մեծ ողբերգություն հայ ժողովրդի՝ շուշեցի հայերը չեն կարողանում կազմակերպվել և պատշաճ դիմադրությամբ հետ մղել հայի արյան և ինչքին կարոտ թուրք-թաթարական խաժամուժի հերթական ռունձգությունները, և 1920 թ. մարտ-ապրիլ ամիսներին քաղաքաբնակ հայերը կորցնում են մի քանի հազար համաքաղաքացիներ: Գրեթե ամբողջությամբ հրդեհվում են քաղաքի հայկական քաղամասերը:

**Կառուցապատում.** 1847 թ. Շուշին ստանում է քաղաքի կարգավիճակ, սակայն նրա կառուցապատումը նոր և աննախընթաց փուլ էր թևակոխել դեռևս Արցախը Ռուսաստանի հետ միավորվելուց (1805) և հատկապես Գյուլիստանի պայմանագրով (1813) այն ամրագրելուց հետո:

Միայն XIX դարի ընթացքում ռուսական իշխանությունները պատրաստում են քաղաքի զարգացման երեք գլխավոր նախագիծ:

Իր գեղեցկությամբ Շուշին միշտ էլ գրավել է այցելուներին: 1891 թ. «Տարազի» թղթակիցը, օրինակ, նշել է. «Մարի գազաթը, որ բնութիւնը ստեղծել է Շուշու համար, հարթ ու հաւասար չէ. նրա վրայ բարձրանում են մեծ ու փոքր թուփեր, որոնք իրանց կարողութեան չափ մեծ ու փոքր ձորեր են կազմում...: ...քազմաթիւ մեծ ու փոքր տներ, որոնք մի գեղանկար անկարգութիւն են կազմում և ընկղմած են կանաչ պարտէզների ու ծառերի մէջ: Ամենից բարձր տեղ երևում է Նոր-քաղի փոքրիկ եկեղեցին, նրանից ցած՝ մեծ ու լայն առաջնորդարանը, ուր գեւեղուում է և Ղարաբաղի թեմական դպրանոցը. այդ շինութիւնը կարծես միակն է ամբողջ քաղաքի մէջ, որ գրաւելով լաւ տեղը, իր մեծութեամբ և դիրքով առանձին ուշադրութիւն է գրաւում քաղաքի ամեն կողմից նայելիս: Յետոյ զայիս են հայերի մեծամեծ տները, որոնց նմանը չըկայ թուրքերի բաժնում, ուր հոտած, մեղ ու մթին, սարսափելի փողոցները ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւնների բոյնն են կազմում»:

1905 թ. մի ականատես նշել է. «Շուշի: Ամեն կողմ քար ու ամեն շինութիւն քարից: Ամբողջ քաղաքն ընկած է լեռան գլխին շրջապատած անդրանման ձորերով: Իր մէջ էլ, իր թաղերն էլ ընկած են ձորերի մէջ, բլուրների վրայ և ամենքն էլ միացած քարածածկ փողոցներով: Տները մեծամասնութիւնը շինւած է մի քանի յարկից: Կան և չորս յարկանի տներ: Իւրաքանչիւր տուն իրան կից ունի մրգաւտ այգի, ծաղիկներով զարդարուն»:

Նույն թվականին մեկ այլ հեղինակ էլ նշել է. «Հայոց թաղն անհամեմատ մաքուր է: Տները շինւած են երոպական ճաշակով, փողոցները ծածկւած են քարով, եզրերը սայլաց՝ մայրերով...»:

Քաղաքի հայոց թաղերը հայտնի էին Ազուլեցոց, Ղազանչեցոց, Վերին, Ղարաբաղցոց (Ներքին), Մեղրեցոց և Ջրաբերդցոց անուններով:


**Բնակչություն.** Շուշիի բնակչության թվաքանակը մատնանշող վիճակագրական առաջին տվյալները վերաբերում են XIX դարի կեսերին: Այսպես՝ 1849 թ. քաղաքն ուներ 13.667, 1897 թ.՝ 25.881, 1905 թ.՝ 30000 բնակիչ (56%-ը՝ հայ, 43%-ը՝ թուրք):

Աղբրեջանական իշխանությունների վարած հակահայ քաղաքականության արդյունքում Արցախյան ազատամարտի նախօրեին Շուշին վերածվել էր գրեթե զուտ թաթարաբնակ (աղբրեջաբնակ) քաղաքի: 1992 թ. մայիսի 9-ին քաղաքի ազատագրումով մեկընդմիջտ բեկվում է քաղաքի բնակչության պատկերը, որտեղ վերստին հաստատվում են երկրի բնիկները:





# ՇՈՒՇԻ. ՂԱԶԱՆԶԵՑՈՑ ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ



Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցին հիմնադրվել է XIX դ. սկզբներին: Արդեն 1847 թ. եկեղեցին հասցրել էր այնքան քայքայվել, որ նորոգության կարիք ուներ. «...կարկատանս ինչ առնել ի գմբեթն և ի սալակալ անոր և վերանորոգել զժեպ շինուածոյ եկեղեցոյն ի ներքուստ...»:

Մակայն եկեղեցու խիստ քայքայված կացությունը ծխականներին դրդում է ոչ թե նորոգել, այլ հին տեղում կառուցել բոլորովին նոր եկեղեցի:

1858 թ. տակավին քայքայված վիճակում գտնվող հին եկեղեցու հարևանությամբ սկիզբ է առնում զանգակատան շինարարությունը: Իսկ նոր եկեղեցու հիմնադրումը տեղի է ունենում զանգակատան կառուցման ավարտից անմիջապես հետո՝ 1868 թ. մայիսի 21-ին: Հիմնօրհները նույն թվականի հունիսի 20-ին կատարում է Արցախի թեմի առաջնորդ Գրիգոր Եպիսկոպոս Սագինյանցը:

Հետագա տարիներին նյութական տղության պատճառով շինարարական աշխատանքները տևաբար ձգձգվում են և, ըստ էության, ամբողջաճամ միայն ճարտարապետ Սիմոն Տեր-Հակոբյանցի նախագծով 1884-1887 թթ. ընթացքում երեցփոխ Յարամիշյանցի հոգածությամբ և Թ. Թամիրյանի նյութական աջակցությամբ:

1887 թ. մարտի 21-ին դեռևս առանց գմբեթի նորակառույց եկեղեցին դարձյալ օծում է Արցախի թեմի առաջնորդ Սագինյանցը:

Փամանակակցի վկայությամբ «...առհասարակ եկեղեցին մի հիանալի շինություն է ներկայացնում, որի նմանը, ինչպես հաւատացնում են շատերը, չը կայ Կովկասի և ոչ մի հայկական տեղում: Նա շինուած է սրբատաշ սալաքարերից, հին Հայոց ճարտարապետության կանոններով: Ճարտարապետը դաստարոթեան եւ ոճի կողմից աչքի առաջ է ունեցել Անիի մայր եկեղեցին: Այժմ պակաս է միայն գմբեթը, բայց այդ էլ, ինչպես յայտնեց սրբազանը, յաճճն է առել շինել տալ իր հաշուով Շուշեցի պ. Թադեոս Թամիրեանց: Տասն եւ ինն տարվայ ընթացքում եկեղեցու շինութեան վրա Ղազանչեցոց եկեղեցու ժողովուրդը ծախսել է հարիւր հազար րուբլոց աւելի»:

1889 թ. եկեղեցու շրջակայքը սպառնալուծվում է Հովհաննես Խունյանցի միջոցներով:

1925 թ. քաղաքի բոլոր մյուս հայաշեն կառույցների մասն եկեղեցին ևս գտնվում էր ծայրահեղ անմխիթար վիճակում. «Ղազանչեցոց եկեղեցին գոմանոցի վերածած, դռներ, պատուհաններ հանած, ատեանի վերին կամարից երկու տեղ ծակած...»:

1958 թ. օգոստոսի 26-ին Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսը, մտահոգ եկեղեցու անմխիթար վիճակով, նշել է. «Ռդալի կացության է մատնված Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի Ս. Գր. Լուսավորչի եկեղեցու շենքը, որը ճարտարապետական ու պատմական մի հիսարան է, հույակալ կորոլ կարելի է համարել: Բարեբախտաբար, այս եկեղեցին ամբողջությամբ դեռևս կանգուն է, փլված է միայն կենտրոնական գմբեթը, և որոշ ավերածության է ենթարկված շենքի ներքև»:

Անցյալ՝ 1957 թվականի սեպտեմբերին, երբ անձամբ այցելեցի այս եկեղեցին, ...սկանառես եղանք աննկարագրելի մի տեսարանի: Բացի փլված գմբեթից՝ եկեղեցու բոլոր դռներն ու պատուհանները հանված էին, երբեմնի այս արդարավայրը ուղղակի վեր էր ածվել անասունների ախոռի: ...Այդ պահին մեզ հետ էր նաև Ադրբեջանական ՍՍՌ Սինիստրների Սովետին կից Կրոնից Գործերի լիազոր պրն. Մամեդովը: Նա ևս մեզ հետ միասին վրոդվեց այդ տեսարանով և համաձայնվեց, որ ճարտարապետական և պատմական այդ հույակալ կորոլի նման ողբալի վիճակը հետևանք է դատապարտելի անտարբերության: Հենց տեղվույն վրա մենք պայմանավորվեցինք պրն. Մամեդովի հետ, որ տեղական իշխանությունները ձեռք կառնեն ամենատարրական միջոցները եկեղեցու շենքը հետագա ավերածությունից պաշտպանելու համար՝ ներքև մաքրելու և շենքի դռներն ու պատուհանները հասարակ տախտակով գամելու, որպեսզի անասունները չմտնեն, մինչև որ հնարավոր լինի հնությունների պահպանման պետական պատկան մարմինների միջոցով նորոգելու այդ եկեղեցին, որը, իբրև պատմական ու ճարտարապետական հնություն, կարող է միայն պատիվ բերել որևէ քաղաքի:

Ահա անցել է 1 տարի, սակայն, մեր ունեցած տեղեկությունների համաձայն, ոչ մի միջոցառում չի կատարված, և եկեղեցին մնում է նույն անմխիթար վիճակում»:

1970-1980-ական թթ. (մինչև 1988 թ.) եկեղեցին առավել վատաբար վիճակում էր: Շուշիի ադրբեջանական քաղաքային իշխանությունների թողտվությամբ, բայց, ավելի ստույգ, նրանց լուռ հովանավորությամբ եկեղեցին վերածվել էր հասարակական գուգարանի:

1988-1992 թթ. ընթացքում հիմնահատակ ոչնչացվել էր եկեղեցու հարավարևմտյան կողմում տարածված գերեզմանոցը, որտեղ ամփոփված էին քաղաքի հասարակական կյանքում մեծ ավանդ ունեցած պատվավոր անձինք: Դրանց թվում էր նաև բարեգործ Թադեոս Թամիրյանի՝ սև մարմարից կերտված հուշակոթողը:





Արցախյան ազատամարտի թեժ օրերին՝ մինչև քաղաքի ազատագրումը (1992 թ., 9 մայիսի), եկեղեցու շենքն ադրբեջանցիների կողմից վերածվել էր զինապահեստի:

1990-ական թթ. վերջերից մինչև 2000-ական թթ. սկզբները Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցին զանգակատան հետ միասին ենթարկվում է ամբողջական վերականգնման, իսկ տարածքը՝ բարեկարգվում:





# ՇՈՒՇԻ. ՄԱՐՄԵԴԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ



XVIII-XX դարերի ընթացքում Շուշիում կառուցվել են 9 մզկիթներ: Գրանցից ամենահինը հիմնվել է 1752 թ. (Հիջրայի 1167 թ.): 1849 թ. դրությամբ քաղաքում կար 9 մզկիթ, որոնցից միայն «...մէկն է աչքի ընկնում իր արտաքինով և երկու սիրուն մինարեթներով»:

Ամենահին մզկիթի մուտքից վեր՝ աջ կողմում ագուցված սալիկին, արաբերեն ելնդագիր եռատող արձանագրված է.

قراباغ | عمل كربلاي صفي خان معمار | ۱۲۹۱  
Թարգմ. Կարաբաղ: Գործը ճարտարապետ Քարբալա Սաֆա Խանին: 1291 (1874-1875):

Երկրորդ մզկիթը կառուցվել է 1883/1884 թթ.: Ունի 4 սյունների վրա կանգնած ընդարձակ դահլիճ, որի հարավարևմտյան անկյունում վեր է խոյանում աղյուսաշեն մինարեն: Քաղաքի ազատագրումից հետո «Շեն» միության ֆանդերով վերականգնվել է: Մզկիթի՝ արևելյան ճակատից բացված մուտքից վեր պահպանվել է արաբերեն ելնդագիր եռատող արձանագրությամբ սալիկ.

قراباغ | عمل كربلاي صفي خان معمار | ۱۳۰۱  
Թարգմ. Կարաբաղ: Գործը ճարտարապետ Քարբալա Սաֆա Խանին: 1301 (1883-1884):

Նույն մզկիթի մուտքից վեր ագուցված մեկ այլ սալիկին պահպանվել է արաբերեն ելնդագիր 7 տող արձանագրությամբ.

بسم الله الرحمن الرحيم | انما يعمر مساجد الله | من امن بالله

واليوم الآخر | الله محمد علي | فاطمة حسن و حسين | ۱۳۱۲  
مسجد قسماغتلو سنة ۱۳۱۲

Թարգմ. Ամենաներող Աստուծու անունով: Ով որ հավատում է Աստուծո և հավիտենական կյանքին, նա է կառուցում Աստուծո մզկիթները: Աստված, Մուհամմեդ, Ալի, Ֆաթմա, Հասան և Հուսեյն: Կիսմաղիղու մզկիթ, քվին 1312 (1894-1895):

Քաղաքի աչքի ընկնող մզկիթներից հաջորդը կառուցվել է 1883/1884 թթ.: Դա է վկայում մզկիթի հյուսիսային ճակատից բացված մուտքից վեր ագուցված սալիկին փորագրված արաբերեն եռատող ելնդագիր հետևյալ արձանագրությամբ.

قراباغ | عمل كربلاي صفي خان معمار | ۱۳۰۱  
Թարգմ. Կարաբաղ: Գործը ճարտարապետ Քարբալա Սաֆա Խանին: 1301 (1883-1884):

Ունի զույգ մինարեթներ, 4 սյունների վրա կանգնած ընդարձակ դահլիճ և հյուսիսային կողմում ներքին բակով մզկիթին կցված հարակից շինություններ: Սզկիթի շուրջը տարածված գերեզմանոցում պահպանվել են XX դարի սկզբներին վերաբերող մի քանի արձանագիր տապանաքարեր: Գրանցից ուշագրավ են հետևյալները.

Գերեզմանաքար. ուղղահայաց կանգնած քարի արևելահայաց դիմային երեսին, արաբերեն, ելնդագիր՝ 6 տող.

هو الباقي | مزار مرحوم مظلوم | شهيد علي بن حاج | اسكندر في ۲۷ جمادى الثاني ۱۳۲۳  
Թարգմ. Աստված է մնում: Հանգիստ հացի Բաքենդերի որդի տանջված նահատակ հանգուցյալ Ալիի: 27 ջումադա ալսանի 1323 (29 օգոստոս 1905):

كل نفس ذائقة الموت | مرقد | مرحوم قوجه والد مرحوم مشهدي محمد ... | ۱۳۲۳

Թարգմ. Ամեն որ համտեսելու է մահը: Հանգիստ հանգուցյալ հացի Մուհամմեդի որդի հանգուցյալ Կոջայի ... 1323 (1905-1906):

Գերեզմանաքար. ուղղահայաց կանգնած քարի արևելահայաց դիմային երեսին, արաբերեն, ելնդագիր՝ 7 տող.

كل نفس ذائقة الموت | مرقد مرحوم امير المظفر كربلاي نوري بن مرحوم | كربلاي حسين علي زاده | ۲۹ جمادى الاخر وقات | ۱۳۲۳

Թարգմ. Ամեն որ համտեսելու է մահը: Հանգիստ հանգուցյալ Քարբալա Հուսեյն Ալի Ջադայի որդի ներված հանգուցյալ Քարբալա Նուրայի: Մահացել է 29 ջումադա ալսախեր 1323 (31 օգոստոս 1905):

Գերեզմանաքար. ուղղահայաց կանգնած քարի արևելահայաց դիմային երեսին, արաբերեն, փորագիր՝ 5 տող.

هو الباقي | مزار مرحوم مظلوم | شهيد علي بن حاج | اسكندر في ۲۷ جمادى الثاني ۱۳۲۳  
Թարգմ. Աստված է մնում: Հանգիստ հացի Բաքենդերի որդի տանջված նահատակ հանգուցյալ Ալիի: 27 ջումադա ալսանի 1323 (29 օգոստոս 1905):



Շուշի մյուս մզկիթները հիմնականում կառուցվել են XX դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում, որոնք ունեն ճարտարապետական գույալ լուծումներ, գուրկ են գեղարվեստական հարդարանքից, շինարարական ընթացքը լուսարձակող որևէ արձանագրությունից (բացառությամբ են կազմում Դուրանից քաղված առանձին հատվածներ): Այդ մզկիթները քաղաքի ճարտարապետական ընդհանուր նկարագրության մեջ ներկայանում են որպես աչքի չընկնող կառույցներ:







# ՇՈՒՇԻ. ԶՐԱԳԾԵՐ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ԶՐՅՈՐՆԵՐ



XVIII-XIX դարերում Շուշիի ջրամատակարարումը գլխավորապես իրականացվում էր քաղաքում փորված բազմաթիվ ջրհորների միջոցով. «Քաղաքը բառական բարձրության վրա լինելով՝ նրա նախկին բնակիչները օգտվել են ստորերկրյա ջրերից: Գետինը խոր փորել են և 4, 5, 10 և 12 սաժեն խորությունից ջուր հանել: Այդպիսի հորերի թիւը առաջներում շատ շատ էր, բայց երբ ջրանցքներով քաղաք բերվեց բառականաչափ ջուր, այն ժամանակ այդ հորերի նշանակությունն ընկավ, և հողով լցվեցին»:

Հայտնի է, որ ջրհորների ջուրն աղի էր: Դրա պատճառով շուշեցիների հիմնական մասն այն առավելապես գործածում էր տնտեսական նպատակներով, իսկ խմելու համար պիտանի ջուրը գրաստներով փոխադրվում էր քաղաքամերձ աղբյուրներից:

1871 թ. խնդիրն որոշ չափով լուծում է տրվում: Քաղաքամերձ աղբյուրներից մեկի ջուրը կավե խողովակաշարով հասնում է քաղաք և հորդում երկու քարաշեն աղբյուրների միջոցով, մեկը՝ հայոց, մյուսը՝ թաթարական թաղամասերում:

Օրավոր զարգացող քաղաքի պահանջները բավարարելու նպատակով 1896 թ. բարեգործ Թադեոս Թամիրյանցի միջոցներով 18 կմ հեռավորությունից Շուշի է հասցվում ևս մեկ ջրագիծ:

1899 թ. Շուշի են բերվում հերթական ջրագիծն ու աղբյուրը: Քարաշեն աղբյուրը կանգնեցվում է քաղաքի Վերին թաղում՝ Ռեալական դպրոցի հարևանությամբ:

1988-1992 թթ. միջակայքում ոչնչացված այս աղբյուրի շինարարական արձանագրությունն ավանդել է, որ հանրօգուտ և բարեհիշատակ ձեռնարկի հեղինակներն էին Առափելյան եղբայրները: Այդ մասին էր ավանդում աղբյուրի ճակատին փորագրված արձանագրությունը.

*Եղբարք Միրզա և Միմեօն Առափելյաններն ի յաւերժական յիշատակ իրենց աննոռաց հանգուցեալ ծնողների Առաքելի և Եղիսաբէթի կառուցին սոյն ջրմուղն իւր բոլոր պարագաներով, 1899 թ., Շուշի:*

Քաղաքի մերձակայքում մեծ հոչակ էր վայելում բոխի ծառատեսակի անունը կրող և ցարդ անխափան գործող Պեխե աղբյուրը, որը ճարտարապետական ուրույն համալիր է: Աղբյուրը գտնվում է Շուշիից 2-3 կմ հեռավորության վրա՝ բնության բացառիկ գեղատեսիլ վայրում:

Շուշեցի հայերն աղբյուրը կոչում էին նաև Իսահակի աղբյուր, իսկ կովկասյան թաթարները (ներկայիս աղբեջանցիները), դարձյալ հիմք ընդունելով վարպետի անունը, այն կոչում էին Իսաբուլաղ:

Բարեբախտաբար ցարդ պահպանվում է աղբյուրի՝ 7 տողով փորագրված շինարարական արձանագրությունը.

*Պեխե աղբյուր: Յիշատակ է աղբիւրս Աստուածատրոյ Դաթեան ճգնաւորեանց, 1871: Վարպետ Իսահակ:*

1900 թ. հայկական և թաթարական թաղամասերի միջասահմանին կառուցվում է ևս մեկ աղբյուր՝ արդեն գոյություն չունեցող հետևյալ արձանագրությամբ.

*Այս ջուրն Թամիրյանցի ջրամբարիցն է բերուած յիշատակ Սամու աղա Ջավաիր, 1900 թ.:*

1902 թ. շուշեցի մեկ այլ վաճառական շուրջ 68 վերստ հեռավորությունից սեփական միջոցներով կառուցել է տալիս մի նոր ջրագիծ ևս:



ANNEE PORTEURS D'EAU A CHOUGHA.

